Մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմը հայտարարում է «Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար.

1. ***Թափուր պաշտոնի անվանումը՝*** «Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

2. ***Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի՝***

1) բարձրագույն կրթություն.

2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝

1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Կազմակերպության տնօրեն չի կարող առաջադրվել, նշանակվել, ընտրվել այն անձը, որը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.

2) ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.

4) 65 տարին լրացած քաղաքացիները.

5) ներկայացված փաստաթղթեր լրիվ չեն կամ թերի են::

3. ***Հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը՝*** «Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի մշակույթի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.
3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.
4) ինքնակենսագրություն.
5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, նախադպրոցական հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակները և պատճենները.
6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.
7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):
Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

5. Մրցույթը կանցկացվի ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի շենքում (հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի փողոց , շենք 8/1), *2025 թվականի օգոստոսի 29-ին, ժամը՝ 11:00-ին:*

6.Դիմումներն ընդունվում են Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմում հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի փողոց , շենք 8/1, հեռ.՝ (0253) 2-41-00), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ *2025 թվականի օգոստոսի 19 -ը՝ ժամը 18:00-ն :*

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիներին ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանը կապահովի հարցաշարերով և միաժամանակ կտրամադրի այն իրավական ակտերի ցանկը, որոնցից կազմված կլինի հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարը